


ՆՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆԵՐ

ՓԱԽՍՏՈՍ ԲՈՒՋԱՆԴԻ ՄԱՍԻՆ



առ Հ. Գ. Նախապետեան

(Ընդգծուած բառերը՝ սխալ ձևեր կը ներկայացնեն. փակագծի մէջ գրուածն՝ ուղիղ ձևեր)։

(տպ. ձեռ. 1889)

- ԻՋ. 50 12. — «Վասկածէր յառնէն զի գոյժ* (= յոյժ) խոտվութիւն ինչ ի մէջ Թա-
գաւորացն երկոցունց արասցէ (= յարուսցէ) ?»
ԻԵ. 50 28. — Ասելով թէ այնչափ ի հեռ... և յաներկիւղութեան առ Թագաւորն
Պարսից... մինչ... զմիտս զողանալ քո»։ — Նախադասութիւններ առանց բայի,
Ուղղել՝ «և յաներկիւղութեան է. առ Թագաւորն... զմիտս քո զողանալ կամի»։
ԻԸ. 51 11. — «Նամակ ամբաստանութեան զրեալ յարքայն (գարքայն) Հայոց մա-
տուցանէր Ներսէնի»։
ԻԹ. 52 12. — «Ի բերանոյ շորիկն շոգմոզն տիրաննգն և տիրադրուծն տիրասպա-
նուն (= տիրապանն) տիրամատնիչն»։
Լ. 52 20. — «Այնպէս գիպեցաւ, (զի) յայմ ժամանակի զօրավարքն չէին անդ,
այլ սարտուցեալ (= զատուցեալ) էին»։
ԼԱ. 53 1. — Թընթրիս կոչէն (= կուէր) ի հաց հրաւիրեալ զարքայն. ի պատիւ
մեծարանաց կուէր»։ Վերջինս՝ ջնջելի։
ԼԲ. 53 33. — «Խաղաղ գնայր... յերկիրն Պարսից. և երբայր յԱսորեստան՝ առ
տէրն իւր յարքայն Պարսից»։ — Աւելորդ ու անտեղի կրկնութիւն։
ԼԳ. 55 15. — «Զուխտն յիշեալ... զերզմանցն հաստատութեան, միջնորդութեամբ
ի մէջ կայսերն... և Թագաւորին... եղեալ էր»։ Կը պակսի «որ» և միջնորդի
կամ ազգին անունն ալ։
ԼԴ. 56 22. — «Բայց միայն Թագաւորն պրծեալ մագապուր, պէշասպիկ մի սուր-
հանդակ առաջի պրծեալ ելանէր փախստական»։ — Երկրորդ պրծեալն է աւե-
լորդ կրկնութիւն։
ԼԵ. 57 22. — «Ապա գտանէր (= հանէր) հրովարտակ... Վաղէս առ արքայն Պար-
սից»։ — (Հ. Գ. Ն. Կ'ուղղէ՝ գրէր)։
ԼԶ. 57 29. — «Զի եթէ ոչ... դարձուցես, և ես ապա զքոյդ դարձուցից»։ —
Ապառնալիքով մ'է որ կը խօսի Վաղէս, ուստի պէտք է ուղղել «ո՛չ դարձուցից»։
ԼԷ. 58 26. — «Կատարեցաւ երրորդ դարը (= շարը), քսան և մի պատմութեանց
դպրոստիւնը, ժամանակագիր կանոնք փախստեայց»։

Հմտ. (էջ 5 տող 18) «է ինչ պատմութիւն՝ որ առաջին է, և է ինչ՝ որ
վերջին է. իսկ որ միջինն ինչ եղև, այն ի ձեռն այլոց գրել գրեցաւ»։

Բուզանդ՝ դեռ իւր պատմութիւնը չսկսած, կ'ըսէ որ՝ Թաղէոս Առաքելոյ քա-
րողութենէն մինչև Տրդատայ մահը եղած պատմութիւնը «ի ձեռն այլոց գրե-
ցան»։ — ԱՊԱՔԱՆԳԻՆՈՍԸ ակնարկելով, — ապա կը յարէ իւր առջի խօսքը
«Վասն զի է՝ ինչ» և այլն, որով ըսել կ'ուզէ թէ ինքը պատմութիւն մը գրեի

* Կարելի չէ՝ արդեօք «գոյժ»ը կարգաւ նաև «զուցէ»։

է, որուն շարունակութիւնն այլևս ըրած են, իսկ ասոնց շարայարութիւնն ալ դարձեալ ինքը փառաբան շարադրեր է, որ է սոյն այս գիրքը:

Ուստի՝ երեք շարք պատմութիւններ ի նկատի ունի. հետեւաբար գրած պիտի ըլլայ՝ «Կատարեցաւ երրորդ շարք» և այլն:

Ի վաղուց՝ փախստեալք սրբազրուած է՝ փառասեայ:

- ԼԳ. 59 3. — « ԶՈՐՐՈՐԴ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ »: Ուղղելի՛ խոստաբանութիւն, Հմտ. էջ 1. « ԲՈՒԶԱՆԿԱՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ Խոստաբանութիւն ՆԱԽԱԳԻՏԵԼԻ »: էջ 1 տող 23. « Եւ չորս խոստումն չորից չորեցունց դպրութեանց »: էջ 2. « ԽՈՍՏՈՒՄՆ ԵՐՐՈՐԴ »: էջ 59 տող 6. « ԽՈՍՏՈՒՄՆ ԽՈՍՏԱՅԵԼՈՑՍ »: էջ 267. « Վեց-երորդ ԽՈՍՏԱՅԱՆՈՒԹԻՒՆ »:

Սրբագրել միևնոյն վրիպակը՝ նաեւ յէջ 185 տող 3. « Խոստովանութիւն » (== խոստաբանութեան) — իսկ վերագրեալ 59 էջի 5 տողէն ալ՝ « Կանոնք դարք և դարք պատմութեանց զրուցաց » անշուշտ նոսրագիր բառից մին փոխելու է՝ շարք (կամ կարք):

- ԼԹ. 66 7. — « Յաղագս րէ ճրպէս յետ բազում շփոթի պատերազմացն Ներսէս արքայն Պարսից րէ ճրպէս թագաւորեցոյց » և այլն: Ձնջել երկրորդ « թէ որպէս »-ը, որ է աւելորդ կրկնութիւն ընդօրինակողին:

- Խ. 66 20. — « Խաղաց գնաց Արշակ արքայ Հայոց մեծաց. ԹԱԳԱՒՈՐԵԱՅ ՑԵՐԿՐԻՆ ԱՍՈՐԵՍԱՆԵԱՅՑ հանդերձ հարբն իտով և ամենայն շնտանեօրն իտովք. եկն եհաս յերկիրն Հայոց, և ժողովեաց զցրուեալս երկրին և քաղաւորեաց ի վերայ նոցա »:

Արշակ՝ ԹԱԳԱՒՈՐ ԱՍՈՐԵՍԱՆԵԱՅՑ!!

Բուզանդ յէջ 53 տող 35 կ'ըսէ. « Երթալը (վարազ Շապուհ) յԱսորեստան առ տէրն իւր յարքայն Պարսից » տանելով հետը իր նենգութեամբ ձերբակալած գերիները, Տիրան՝ իր գերդաստանով միասին, — Ուրեմն վերոյիշեալ խօսքն ուղղելի է:

« Խաղաց գնաց Արշակ՝ արքայ Հայոց մեծաց, յերկրէն (քաղաւորաց) Ասորեստանեայց »:

- ԽԱ. 67 7. — Յաղագս շինութեան կարգաց յօրինելոց (== աւերելոց) աշխարհին »:

- ԽԲ. 67 10. — « Յայնմ ժամանակի խնդիր (== ի խնդիր) ելանէր... Մամիկոնեանից. մանաւանդ զի իւր դայակս (== դայակք) և սնուցիչք էին »:

- ԽԳ. 67 17. — « Յամենայն գործոց Հայոց ի ժամանակս խաչութեանն (== քաղաւորութեանն կամ իշխանութեանն) Տիրանայ »:

(Հ. Գ. Ն. կ'ուղղէ « խաչութեանն »):

* * *

